ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 06.09.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2019/60

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի

Մասնակցությամբ՝ «Ավտոֆան Էյ Սի» ՍՊԸ-ի տնօրեն՝

Ա. Շահինյանի (իրավաբանական անձի պետական գրանցման վկայական N 03Ա074123)

ՀՀ ոստիկանության ներկայացուցիչ՝

Ս. Գրիգորյանի (լիազորագիր, տրված՝ 16.08.2019թ.)

քննելով ՀՀ ոստիկանության կարիքների համար ավտոտրանսպորտային նյութերի ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ Ո-ԳՀԱՊՁԲ-ԱՆ-2019/ՊՊԳՎ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում «Ավտոֆան Էյ Սի» ՍՊԸ-ի կողմից 12.08.2019թ. ներկայացված (13.08.2019թ. վարույթ ընդունված) բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2019/60 բողոք), պարզեցի հետևյալը.

1. **<u>«Ավտոֆան Էյ Սի» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>**

«Ավտոֆան Էյ Սի» ՍՊԸ-ն (հետայսու նաև՝ Ընկերություն) 12.08.2019թ. ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

Սույն թվականի հուլիսի 9-ին ՀՀ ոստիկանության (հետայսու նաև՝ Պատվիրատու) կարիքների համար հայտարարվել է ավտոտրանսպորտային նյութերի ձեռքբերման «ՀՀ Ո-ԳՀԱՊՁԲ-ԱՆ-2019/ՊՊԳՎ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ):

Ուսումնասիրելով գնման փաստաթղթերը՝ Ընկերության մասնագետի կողմից 1-ին և 2-րդ չափաբաժինների տեխնիկական պարամետրերի մեջ անհամապատասխանություն հայտնաբերեց, ինչի մասին որոշվեց պարզաբանում ուզել Պատվիրատուից և 11.07.2019թ.-ին՝ համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի, Ընկերության աշխատակցի կողմից՝ armeps համակարգի միջոցով ուղարկվել է պարզաբանման հարցում՝ հետևյալ բովանդակությամբ.

«Գնահատող հանձնաժողովի քարտուղար Ասատուր Աբոյանին

Հարգելի պարոն Աբոյան 2019թ. հուլիսի 9-ին հայտարարել եք «ՀՀ-Ո-ԳՀԱՊՁԲ-ԱՆ-2019/ՊՊԳՎ» ծածկագրով մրցույթ: Խնդրում ենք պարզաբանել Հավելված 1 տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց աղյուսակում.

1. Առանձին չափաբաժնի տեխնիկական բնութագիր բաժնում շարժիչի յուղեր կիսասինթետիկ նախատեսված բենզինային շարժիչների համար, միջազգային ստանդարտներ API մածուծիկության աստիճանը 10W40.

Հարց. API որ ստանդարտին պետք է համապատասխանի API SG, SL, SM, SN որը ցույց է տալիս տվյալ յուղի որակական տարբերությունները և ինչ մեքենաների համար է նախատեսված տվյալ շարժիչի յուղերը (արտադրման տարեթիվը և վազքը) :

2. Շարժիչի յուղեր սինթետիկ՝ նախատեսված բենզինային շարժիչների համար, միջազգային ստանդարտներ API մածուծիկության ինդեքսը 15W40.

Հարց. API որ ստանդարտին պետք է համապատասխանի API SG, SL, SM, SN որը ցույց է տալիս տվյալ յուղի որակական հատկանիշը:

Հարց. 15W40 մածուծիկության յուղը հիմնականում օգտագործվում է շատ հին մինչև 2000թ. արտադրության մեքենաների համար և հիմնականում (90%-ը դեպքերի) լինում է միներալ, կարող է եղել է վրիպակ և դա 5W40 կամ 5W30 մածուծիկությամբ յուղ է:

Եթե հնարավոր է ասեք ինչ մեքենաների համար է նախատեսված (մոդելը, արտադրման տարեթիվը և վազքը):»

Սակայն օրենքով սահմանված երկու օրացուցային օր անց պարզաբանման պատասխան այդպես էլ չի ստացվել, ինչից հետո 15.07.2019թ. Պատվիրատուի էլ. հասցեին Ընկերությունն ուղղել է նույն բովանդակությամբ նամակ, ինչին ի պատասխան էլ. փոստի միջոցով տվել են պարզաբանում և կատարել են ուղղում տեխնիկական բնութագրերում՝ հետևյալ կերպ.

Չափաբաժին 1

Շարժիչի յուղեր կիսասինթետիկ՝ նախատեսված բենզինային շարժիչների համար:
Միջազգային ստանդարտներ՝ API SN/CF ACEA A3/B3, A3/B4:
Մածուցիկության աստիճանը՝ 10W-40:

Հաստատված Եվրոպական ավտոարտադրողների կողմից՝

MB-Approval 229.3 ACEA A3/B3, A3/B4:Opel GM-LL-A/B-025; PSA B71 2294/2300; VW 502 00/505 00; Renault RN 0700/0710; Fiat 9.55535-G2

Կինեմատիկական մածուցիկությունը 1000 C-ի դեպքում՝ 14,089 մմ2 /վ (Ստ) (ASTMD D445)

Մածուցիկության ինդեքսը՝ 166 (ASTMD D2270)

Խտությունը 150 C-ի դեպքում՝ 861,6 (ASTMD D1298)

Ինքնաբոցավառման ջերմաստիճանը՝ ոչ պակաս 228-ից

Բյուրեղացման ջերմաստիճանը՝ ոչ բարձր -37- 4 լիտրանոց տարաներով; հրավտանգ:

Ծծմբայնությունը՝ ոչ պակաս 11,09 кон/г (ASTMD D2896)

Ինքնաբռնկման ջերմաստիճանը՝ ոչ պակաս 3650 C -ից

Չափաբաժին 2

Շարժիչի յուղեր սինթետիկ՝ նախատեսված բենզինային շարժիչների համար:

Միջազգային ստանդարտներ՝ API SN/CF ACEA A3/B3, A3/B4:

Մածուցիկության աստիճանը՝ 5W-40:

Հաստատված Եվրոպական ավտոարտադրողների կողմից՝

BMW LL-01, PORSHE A40, VW 502.00/505.00, MB 229.5 / 226.5, Renault RN 0700/0710 Opel GM-LL-B-025, PSA B71 2296, Fiat 9.55535-Z2/N2

Կինեմատիկական մածուցիկությունը 1000 C-ի դեպքում՝ 13.71 մմ2 /վ (Ստ) (ASTMD D445)

Մածուցիկության ինդեքսը՝ 174 (ASTMD D2270)

Խտությունը 150 C-ի դեպքում՝ 848,9 (ASTMD D1298)

Բռնկման ջերմաստիճանը՝ ոչ պակաս 2340 C -ից

Ինքնաբռնկման ջերմաստիճանը՝ ոչ պակաս 3570 C -ից

Բյուրեղացման ջերմաստիճանը՝ ոչ բարձր -400 C, 4 լիտրանոց տարաներով; հրավտանգ:

Ծծմբայնությունը՝ ոչ պակաս 10,0 кон/г (ASTMD D2896)

Հիմք ընդունելով փոփոխված տեխնիկական բնութագրերը Ընկերությունը մասնակցել է վերոհիշյալ գնման գործընթացին:

2019թ. հուլիսի 19-ին ՀՀ ֆինանսների նախարարության էլեկտրոնային armeps համակարգի միջոցով տեղի է ունեցել հրավերի մասնակիցների հայտերի բացումը:

Ի թիվս այլ մասնակիցների հայտեր են ներկայացրել նաև «Ավտոֆան Էյ Սի» ՍՊԸ-ն և «Նեֆտեպրոմ» ՍՊԸ-ն, վերոհիշյալ մրցույթի խնդրո առարկա դարձած 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Նեֆտեպրոմ» ՍՊԸ-ն՝ համաձայն 24.07.2019թ. թիվ 2-րդ արձանագրության և առաջարկել է ներկայացնելու 2-րդ փուլի փաստաթղթերը:

Ուսումնասիրելով մասնակիցների գնային առաջարկը Ընկերության մոտ կասկածներ առաջացան, որ նրանք տեղյակ չեն պարզաբանումից, քանի որ երկար տարիներով աշխատելով ՀՀ շուկայում պարզ է, որ անհնար է այդքան էժան գնով մատակարարել պահանջվող ապրանքը, ինչի համար ևս մեկ անգամ Ընկերությունը դիմել է Պատվիրատուին այն հարցով, որ արդյոք նրանք armeps համակարգի բոլոր հնարավոր մասնակիցների համար ապահովվել են պարզաբանման հասանելիությունը, ինչը «Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 29-րդ հոդվածի 2-րդ մասի ուղղիղ պահանջն է, ինչի վերաբերյալ Ընկերությանը հայտնեցին հետևյալը, որ պարզաբանմանը

armeps համակարգի միջոցով չեն կարողացել պատասխանել, ինչը ծրագրային խնդիր է և «Ավտոֆան Էյ Սի» ՍՊԸ-ին պատասխանվել է էլ. փոստի միջոցով /պատասխանը կցվում է/, սակայն եթե armeps համակարգով նայենք տվյալ մրցույթի պարզաբանում բաժին, ապա կտեսնենք, որ այնտեղ կա պարզաբանման հարցում այլ մասնակիցների կողմից այլ հարցով և որին տրված է կոնկրետ պատասխան, ինչը վկայում է, որ armeps համակարգի պարզաբանումների բաժինը աշխատել է անխափան, ուստի Պատվիրատուի պատասխանը ակնհայտ սխալ է և ամբողջությամբ հակաօրինական, որից հետո «Ավտոֆան Էյ Սի» ՍՊԸ-ն հանձնաժողովից պահանջել է ներկայացնել «Նեֆտեպրոմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրված փաստաթղթերի պատճենները՝ Հավելված 6 և 6.1, ինչը և Պատվիրատուի կողմից կատարվել է, հավելված 6.1 ուսումնասիրելիս պարզ է դառնում, որ հաղթող ճանաչված մասնակիցը տեղյակ չի, որ տեխնիկական բնութագրում կատարվել են փոփոխություններ և ինքը մասնակցել է սկզբնական հրավերով նախատեսված բնութագրերով, և հանձնաժողովը իրեն, համաձայն 06.08.2019թ. թիվ 4 արձանագրությամբ ճանաչել է հաղթող մասնակից, այն ինչ պետք է երեք աշխատանքային օր տրամադրել շտկում կատարելու համար և արդյունքում ստացվել է, որ միևնույն մրցույթի նույն չափաբաժիններն ունեն տարբեր տեխնիկական բնութագրեր՝ մեկ հնարավոր մասնակցի համար և այլ բնութագիր մեկ այլ մասնակցի համար, ինչը անթույլատրելի է ամբողջությամբ խեղաթյուրում է գնման ամբողջ գործընթացը:

Ընկերությունը որպես բողոքի փաստական հիմքեր նշել է՝

ՀՀ ոստիկանության կարիքների համար ավտոտրանսպորտային նյութերի ձեռքբերման «ՀՀ Ո-ԳՀԱՊՁԲ-ԱՆ-2019/ՊՊԳՎ» ծածկագրով գնանշման հարցման շրջանակում «Ավտոֆան Էյ Սի» ՍՊԸ-ի կողմից պարզաբանման հարցում կատարելը՝ համաձայն Օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի.

Սահմանված ժամկետում՝ armeps համակարգի միջոցով, հարցմանը չպատասխանելը, ինչը համաձայն Օրենքի 29-րդ հոդվածի 2-րդ մասի պատվիրատուի ուղիղ պարտավորությունն է.

armeps համակարգի պարզաբանում բաժնի անխափան լինելու մասին փաստը,

Հարցումը էլ. փոստով կրկին ուղղարկելը և նույն ձևով պատասխան ստանալը.

Արձանագրություններ թիվ 2-ը և թիվ 4-ը.

Ընկերության և Պատվիրատուի էլեկտրոնային գրագրությունները՝ կցված համապատասխան գրություններով, որոնք կներկայացվեն նաև բողոք քննող անձի էլ. փոստին վերահասցեավորված /forward/ տարբերակով գործի քննության ընթացքում:

Հետազոտելով «ԳՀԱՊՁԲ-ԱՆ-2019/ՊՊԳՎ» ծածկագրով գնանշման հարցման հանձնաժողովի գործողությունները ակնհայտ է, որ վերջինիս կողմից թույլ է տրվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի բազմակի խախտումներ, ինչի հետևանքով մեծ խառնաշփոթ է առաջացել տվյալ գնման գործընթացում, երբ որ ամեն մասնակից առանձին վերցրած ճիշտ է, բայց խախտվում մեկ այլ մասնակցի օրենքով պաշտպանվող իրավունքը, ուստի այստեղ կա մեկ մեղավոր դա հանձնաժողովն է, կամ հանձնաժողովի քարտուղարի ոչ օրինաչափ գործողություններն են, որ յուրաքանչյուր մասնակցի հիմք է տալիս բողոքարկելու այս գնման գործընթացը և այստեղից հստակ է որ ամենաճիշտ որոշումը կլինի այն, որ 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով գնման գործընթացը հայտարարվի չկայացած, որպեսզի հետո վերահայտարարված մրցույթում յուրաքանչյուր մասնակից ունենա հավասար հնարավորություն մասնակցելու դրան և որոնք հարցեր չեն առաջացնի օրինականության տեսակետից:

Ընկերությունը վկայակոչել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասը, 13-րդ հոդվածը, 29-րդ հոդվածը, 34-րդ հոդվածի 5-րդ մասը, 46-րդ հոդվածի 1-ին մասը, 3-րդ մասի 1-ին կետը:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասով, 13-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, 29-րդ հոդվածով, 34-րդ հոդվածի 5-րդ մասով, 46-րդ հոդվածի 1-ին մասի, 46-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 50-րդ հոդվածի և 51-րդ հոդվածի դրույթներով՝ Ընկերությունը Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրել է՝

1. Դադարեցնել ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 06.08.2019թ. թիվ 4 արձանագրությամբ «Նեֆտեպրոմ» ՍՊԸ-ին 1-ին և 2-րդ չափաբաժիններով ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը.

2. Չկայացած հայտարարել ընթացակարգը՝ 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով:

«Ավտոֆան Էյ Սի» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 16.08.2019թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է բողոքով ներկայացված դիրքորոշումը:

2. ՀՀ ոստիկանության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.

ՀՀ ոստիկանությունը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 16.08.2019թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով հայտնել է, որ Ընկերությանը տրվել է հրավերի պարզաբանում, որով հստակեցվել է գնման առարկայի համապատասխան պարամետրը, միևնույն ժամանակ հրավերի պարզաբանումը չի հրապարակվել www.gnumner.am կայքում: «Նեֆտեպրոմ» ընկերության կողմից ներկայացվել է ի սկզբանե հրավերի տեխնիկական բնութագրով նախատեսված պարամետրերին համապատասխանող ապրանք, և հաշվի առնելով այն հանգամանքը, որ պարզաբանումը չէր հրապարակվել կայքում և մասնակիցն այն չի տեսել, ուստի գնահատող հանձնաժողովն ընդունել է մասնակցի կողմից ներկայացված տեխնիկական բնութագիրը:

3. ԳԲՔԱ-ՆԳ-2019/60 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲՔԱ-ՆԳ-2019/60 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «ՀՀ ոստիկանության կողմից իր կարիքների համար հայտարարվել է «ՀՀ Ո-ԳՀԱՊՁԲ-ԱՆ-2019/ՊՊԳՎ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.07.2019թ. նիստի թիվ 2 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Նեֆտեպրոմ» ՍՊԸ-ն Ընթացակարգի 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից,

իսկ 06.08.2019թ. նիստի թիվ 4 արձանագրությամբ կայացված որոշմամբ՝ «Նեֆտեպրոմ» ՍՊԸ-ն ճանաչվել է ընտրված մասնակից:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «Ավտոֆան Էյ Սի» ՍՊԸ-ի կողմից 12.08.2019թ. ներկայացված բողոքը՝ կից փաստաթղթերով, «ՀՀ Ո-ԳՀԱՊՁԲ-ԱՆ-2019/ՊՊԳՎ» ծածկագրով ընթացակարգին վերաբերող փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

2. Գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 13-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերի համաձայն՝

1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց

ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

Օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը պարզաբանումներ է ներկայացնում գնման ընթացակարգի վերաբերյալ:

Օրենքի 29-րդ հոդվածի 1-3-րդ մասերի համաձայն՝

1. Մասնակիցն իրավունք ունի հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց առնվազն հինգ օրացուցային օր առաջ գրավոր պահանջելու հրավերի պարզաբանում: Հարցումը կատարած մասնակցին պարզաբանումը տրամադրվում է գրավոր՝ հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու օրացուցային օրվա ընթացքում:

2. Հարցման և պարզաբանումների բովանդակության մասին հայտարարությունը հրապարակվում է տեղեկագրում՝ հարցումը կատարած մասնակցին պարզաբանումը տրամադրելու օրը, առանց նշելու հարցումը կատարած մասնակցի տվյալները, իսկ փակ մրցույթի դեպքում հարցման և պարզաբանումների բովանդակության մասին պարզաբանումը տրամադրվում է հրավեր ստացած մասնակիցներին:

3. Պարզաբանում չի տրամադրվում, եթե հարցումը կատարվել է սույն հոդվածով սահմանված ժամկետի խախտմամբ, ինչպես նաև, եթե հարցումը դուրս է հրավերի բովանդակության շրջանակից: Ընդ որում, մասնակիցը գրավոր ծանուցվում է պարզաբանում չտրամադրելու հիմքերի մասին՝ հարցումը ստանալու օրվան հաջորդող երկու օրացուցային օրվա ընթացքում:

ՀՀ ոստիկանության կողմից իր կարիքների համար հայտարարվել է «ՀՀ Ո-ԳՀԱՊՁԲ-ԱՆ-2019/ՊՊԳՎ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.07.2019թ. նիստի թիվ 2 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Նեֆտեպրոմ» ՍՊԸ-ն Ընթացակարգի 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից, իսկ 06.08.2019թ. նիստի թիվ 4 արձանագրությամբ կայացված որոշմամբ՝ «Նեֆտեպրոմ» ՍՊԸ-ն ճանաչվել է ընտրված մասնակից:

Ընթացակարգի հրավերով 1-ին և 2-րդ չափաբաժինների համար սահմանվել է հետևյալ տեխնիկական բնութագիրը.

Շարժիչի յուղ կիսասինթետիկ	Շարժիչի յուղեր կիսասինթետիկ՝ նախատեսված բենզինային շարժիչների համար: Միջազգային ստանդարտներ՝ API*: Մածուցիկության աստիճանը՝ 10W-40*: Կինեմատիկական մածուցիկությունը 40^0 C-ի դեպքում՝ 93.5* մմ^2/վ (Ստ) Կինեմատիկական մածուցիկությունը 100^0 C-ի դեպքում՝ 13.9* մմ^2 /վ (Ստ) Մածուցիկության ինդեքսը՝ ոչ պակաս 154*-ից Խտությունը 15^0 C-ի դեպքում՝ ոչ պակաս 0.874*-ից Ինքնաբոցավառման ջերմաստիճանը՝ ոչ պակաս 225*-ից Բյուրեղացման ջերմաստիճանը՝ ոչ բարձր -33*- 5 լիտրանոց տարաներով; հրավտանգ:
	Շարժիչի յուղեր սինթետիկ՝ նախատեսված բենզինային շարժիչների

Շարժիչի յուղ սինթետիկ	համար: Միջազգային ստանդարտներ՝ API: Մածուցիկության աստիճանը՝ 15W-40: Կինեմատիկական մածուցիկությունը 40^0 C-ի դեպքում՝ 95.7 մմ^2/վ (Ստ) Կինեմատիկական մածուցիկությունը 100^0 C-ի դեպքում՝ 14.5 մմ^2/վ (Ստ) Մածուցիկության ինդեքսը՝ ոչ պակաս 169*-ից Խտությունը 15^0 C-ի դեպքում՝ ոչ պակաս 0.875*-ից Ինքնաբոցավառման ջերմաստիճանը՝ ոչ պակաս 223*-ից Բյուրեղացման ջերմաստիճանը՝ ոչ բարձր -42*-ից 5 լիտրանոց տարաներով

Ընթացակարգի հայտերի ներկայացման վերջնաժամկետը սահմանված է եղել 19.07.2019թ. ժամը 10:30-ը: Armeps համակարգում առկա տեղեկատվության համաձայն՝ «ՀՀ Ո-ԳՀԱՊՁԲ-ԱՆ-2019/ՊՊԳՎ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի պարզաբանում պահանջելու վերջնաժամկետը սահմանված է 14.07.2019թ. ժամը 10:30-ը:

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ I-ի 3-րդ կետի 3.1, 3.2 և 3.3 ենթակետերի համաձայն՝

3.1 Օրենքի 29-րդ հոդվածի համաձայն՝ մասնակիցն իրավունք ունի պատվիրատուից պահանջել հրավերի պարզաբանում:

Մասնակիցն իրավունք ունի հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց առնվազն հինգ օրացուցային օր առաջ համակարգի միջոցով հանձնաժողովից պահանջելու հրավերի պարզաբանում: **Հանձնաժողովը հարցումը կատարած մասնակցին պարզաբանումը տրամադրում է համակարգի միջոցով՝ հարցումը ստանալու օրվան հաջորդող երկու օրացուցային օրվա ընթացքում:**

3.2 Հարցման և պարզաբանումների բովանդակության մասին հայտարարությունը պարզաբանումը տրամադրելու օրը **հրապարակվում է համակարգում և www.procurement.am հասցեով գործող տեղեկագրի (այսուհետ՝ տեղեկագիր) «Գնումների հայտարարություններ» բաժնի «Հրավերների պարզաբանումների վերաբերյալ հայտարարություններ» ենթաբաժնում՝ առանց նշելու հարցումը կատարած մասնակցի տվյալները:**

3.3 Պարզաբանում չի տրամադրվում, եթե հարցումը կատարվել է սույն բաժնով սահմանված ժամկետի խախտմամբ, ինչպես նաև, եթե հարցումը դուրս է սույն հրավերի

բովանդակության շրջանակից: Ընդ որում, մասնակիցը գրավոր ծանուցվում է պարզաբանում չտրամադրելու հիմքերի մասին՝ հարցումը ստանալու օրվան հաջորդող երկու օրացուցային օրվա ընթացքում:

«Ավտոֆան Էյ Սի» ՍՊԸ-ն 11.07.2019թ. Armeps համակարգի միջոցով դիմել է գնահատող հանձնաժողովին ներկայացնելով հետևյալ հարցումը Ընթացակարգի հրավերի վերաբերյալ.

«Գնահատող հանձնաժողովի քարտուղար Ասատուր Աբոյանին

Հարգելի պարոն Աբոյան

2019թ. հուլիսի 9-ին հայտարարել եք «ՀՀ-Ո-ԳՀԱՊՁԲ-ԱՆ-2019/ՊՊԳՎ» ծածկագրով մրցույթ: Խնդրում ենք պարզաբանել Հավելված 1 տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց աղյուսակում.

1. Առանձին չափաբաժնի տեխնիկական բնութագիր բաժնում շարժիչի յուղեր կիսասինթետիկ նախատեսված բենզինային շարժիչների համար, միջազգային ստանդարտներ API մածուցիկության աստիճանը 10W40.

Հարց. API որ ստանդարտին պետք է համապատասխանի API SG, SL, SM, SN, որը ցույց է տալիս տվյալ յուղի որակական տարբերությունները և ինչ մեքենաների համար է նախատեսված տվյալ շարժիչի յուղերը (արտադրման տարեթիվը և վազքը):

2. Շարժիչի յուղեր սինթետիկ՝ նախատեսված բենզինային շարժիչների համար, միջազգային ստանդարտներ API մածուցիկության ինդեքսը 15W40.

Հարց. API որ ստանդարտին պետք է համապատասխանի API SG, SL, SM, SN, որը ցույց է տալիս տվյալ յուղի որակական հատկանիշը:

Հարց. 15W40 մածուցիկության յուղը հիմնականում օգտագործվում է շատ հին մինչև 2000թ. արտադրության մեքենաների համար և հիմնականում (90% դեպքերի) լինում է միներալ, կարող է եղել է վրիպակ և դա 5W40 կամ 5W30 մածուցիկությամբ յուղ է:

Եթե հնարավոր է ասեք ինչ մեքենաների համար է նախատեսված (մոդելը, արտադրման տարեթիվը և վազքը):»

Ի պատասխան Ընկերության վերոհիշյալ հարցմանը Armeps համակարգում Պատվիրատուի կողմից տրամադրված պարզաբանում առկա չէ:

Ընկերությունը 15.07.2019թ. նույնաբովանդակ հարցում է ներկայացրել Գնահատող հանձնաժողովի քարտուղարի՝ Ընթացակարգի հրավերում նշված «police_procurement@mail.ru» էլ. փոստին, որին ի պատասխան Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 15.07.2019թ. «police_procurement@mail.ru» էլ. փոստի միջոցով Ընկերությանը տրամադրվել է հետևյալ պարզաբանումը.

Չափաբաժին 1	Շարժիչի յուղեր կիսասինթետիկ՝ նախատեսված բենզինային շարժիչների համար: Միջազգային ստանդարտներ՝ API **SN/CF ACEA A3/B3, A3/B4:** Մածուցիկության աստիճանը՝ 10W-40: Հաստատված Եվրոպական ավտոարտադրողների կողմից՝ MB-Approval 229.3 ACEA A3/B3, A3/B4:Opel GM-LL-A/B-025; PSA B71 2294/2300; VW 502 00/505 00; Renault RN 0700/0710; Fiat 9.55535-G2 Կինեմատիկական մածուցիկությունը 100° C-ի դեպքում՝ **14,089** մմ2 /վ (Ստ) (ASTMD D445) Մածուցիկության ինդեքսը՝ 166 (ASTMD D2270) Խտությունը 15° C-ի դեպքում՝ 861,6 (ASTMD D1298) Ինքնաբոցավառման ջերմաստիճանը՝ ոչ պակաս **228**-ից Բյուրեղացման ջերմաստիճանը՝ ոչ բարձր **-37-4** լիտրանոց տարաներով; հրավտանգ: **Ծծմբայնությունը՝ ոչ պակաս 11,09 кон/г (ASTMD D2896)** **Ինքնաբռնկման ջերմաստիճանը՝ ոչ պակաս 365° C -ից**
Չափաբաժին 2	Շարժիչի յուղեր սինթետիկ՝ նախատեսված բենզինային շարժիչների համար: Միջազգային ստանդարտներ՝ API **SN/CF ACEA A3/B3, A3/B4:** Մածուցիկության աստիճանը՝ 5W-40: Հաստատված Եվրոպական ավտոարտադրողների կողմից՝ BMW LL-01, PORSHE A40, VW 502.00/505.00, MB 229.5 / 226.5, Renault RN 0700/0710 Opel GM-LL-B-025, PSA B71 2296, Fiat 9.55535-Z2/N2 Կինեմատիկական մածուցիկությունը 100° C-ի

	դեպքում՝ **13.71 մմ2 /վ** (Ստ) (ASTMD D445) Մածուցիկության ինդեքսը՝ 174 (ASTMD D2270) Խտությունը 15° C-ի դեպքում՝ 848,9 (ASTMD D1298) Բռնկման ջերմաստիճանը՝ **ոչ պակաս 234°** C -ից Ինքնաբռնկման ջերմաստիճանը՝ ոչ պակաս 357° C -ից Բյուրեղացման ջերմաստիճանը՝ **ոչ բարձր -40° C, 4 լիտրանոց տարաներով; հրավտանգ:** **Ծծմբայնությունը՝ ոչ պակաս 10,0 кон/г (ASTMD D2896)**

Այսպիսով՝ ուսումնասիրելով հրավերով հաստատված տեխնիկական բնութագիրը և Գնահատող հանձնաժողովի կողմից որպես պարզաբանում ներկայացված տեխնիկական բնութագիրը, արձանագրում եմ, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից Ընկերությանն ուղարկված պարզաբանման մեջ նշվել են մի շարք պարամետրեր, որոնք էապես տարբերվում են հրավերով հաստատված գնման առարկայի տեխնիկական բնութագրով նախատեսված պարամետրերից:

Դրա հետ մեկտեղ արձանագրում եմ նաև, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի վերոհիշյալ պարզաբանումը հրապարակված չէ www.gnumner.am (www.procurement.am) տեղեկագրում և Armeps համակարգում:

Միևնույն ժամանակ «Նեֆտեպրոմ» ՍՊԸ-ի որպես առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից հայտի թիվ 6.1 հավելվածով Ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների համար ներկայացվել է հետևյալ տեխնիկական բնութագիրը, որը ընդունվել է գնահատող հանձնաժողովի կողմից և գնահատվել է հրավերի պահանջներին համապատասխանող և մասնակիցը ճանաչվել է ընտրված.

1-ին չափաբաժին	Շարժիչի յուղեր կիսասինթետիկ նախատեսված բենզինային շարժիչների համար: Միջազգային ստանդարտներ՝ API SI/CF Մածուցիկության աստիճանը՝ 10W-40 Կինեմատիկական մածուցիկությունը 40° C-ի դեպքում՝ 93,5 մմ2 /վ (Ստ) Կինեմատիկական մածուցիկությունը 100° C-ի դեպքում՝ 13,9 մմ2 /վ (Ստ) Մածուցիկության ինդեքսը՝ ոչ պակաս 154-ից Խտությունը 15° C-ի դեպքում՝ ոչ պակաս 0,874-ից

	Ինքնաբոցավառման ջերմաստիճանը՝ ոչ պակաս 225-ից Բյուրեղացման ջերմաստիճանը՝ ոչ բարձր -33-5 լիտրանոց տարաներով; հրավտանգ:
2-րդ չափաբաժին	Շարժիչի յուղեր միներալ՝ նախատեսված բենզինային շարժիչների համար: Միջազգային ստանդարտներ՝ API SG/CD Մածուցիկության աստիճանը՝ 15W-40: Կինեմատիկական մածուցիկությունը 100° C-ի դեպքում՝ 13,96 մմ2 /վ (Ստ) Մածուցիկության ինդեքսը՝ 158 (ASTMD D2270) Խտությունը 20° C-ի դեպքում՝ 0,8798 (ASTMD D4052) Բռնկման ջերմաստիճանը՝ ոչ պակաս 216° C –ից Ինքնաբռնկման ջերմաստիճանը՝ ոչ պակաս 339° C –ից Բյուրեղացման ջերմաստիճանը՝ ոչ բարձր -45° C, 4 լիտրանոց տարաներով; հրավտանգ: Ծծմբայնությունը՝ ոչ պակաս 4,5 кон/г (ASTMD D2896)

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

Օրենքի 29-րդ հոդվածը նախատեսում է մասնակցի՝ մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց առնվազն հինգ օրացուցային օր առաջ գրավոր հրավերի պարզաբանում պահանջելու իրավունքը և գնահատող հանձնաժողովի կողմից պարզաբանումը սահմանված ժամկետում տրամադրելու պարտականությունը:

Ընդ որում՝ սահմանված ժամկետում տրամադրված պարզաբանումն ենթակա է հրապարակման գնումների տեղեկագրում և համակարգում:

Դրա հետ մեկտեղ, պարզաբանումը պետք է բխի հրավերից և հանդիսանա հրավերով արդեն իսկ հաստատված պահանջների մանրամասնում:

Տվյալ դեպքում արձանագրում եմ, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ոչ միայն խախտել է մասնակցին հրավերի պարզաբանում տրամադրելու թե Օրենքով և թե հրավերով սահմանված կարգը, այլև նաև տրամադրված պարզաբանմամբ մոլորության մեջ է գցել Ընկերությանը, քանի որ տրամադրված պարզաբանմամբ նախատեսվել են գնման առարկայի՝ հրավերով հաստատված տեխնիկական բնութագրերի հատկանիշներից էապես տարբերվող հատկանիշներ: Միևնույն ժամանակ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը բավարար է գնահատել առաջին տեղ զբաղեցրած այլ մասնակցի կողմից՝ ի սկզբանե հրավերով հաստատված տեխնիկական բնութագրերի գրեթե բոլոր հատկանիշներին համապատասխանող ապրանքի տեխնիկական բնութագրերը: Մինչդեռ գնման գործընթացը պետք է կազմակերպվի միասնական մրցակցային կանոններով, իսկ գնման առարկայի բնութագրերը պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար, չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը, պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը: Միևնույն ժամանակ Օրենքի 29-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է, որ հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց առնվազն հինգ օրացուցային օր առաջ հրավերում կարող են կատարվել փոփոխություններ:

Գտնում եմ, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը չի պահպանել գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջները, որը հանգեցրել է գնման գործընթացի սկզբունքների խախտման:

Այսպիսով՝ գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպման, պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնման և նրանց միջև մրցակցության խրախուսման, ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության

սկզբունքներն ապահովելու նպատակով՝ գտնում եմ, Ընթացակարգը 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով պետք է հայտարարվի չկայացած, ուստի գտնում եմ, որ «Ավտոֆան Էյ Սի» ՍՊԸ-ի բողոքը հիմնավոր է և ենթակա է բավարարման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Ավտոֆան Էյ Սի» ՍՊԸ-ի կողմից 12.08.2019թ. ներկայացված բողոքը բավարարել.

1. Պարտավորեցնել «ՀՀ Ո-ԳՀԱՊՁԲ-ԱՆ-2019/ՊՊԳՎ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել Ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով «Նեֆտեպրոմ» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը.

2. Պարտավորեցնել «ՀՀ Ո-ԳՀԱՊՁԲ-ԱՆ-2019/ՊՊԳՎ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին Ընթացակարգը 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով հայտարարել չկայացած:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**